Արձանագրություն N 3

«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/18» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան

06.07.2020թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ի. Կուբատյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Մանուկյանը, Ի. Նիկողոսյանը, Ա. Ղարիբյանը, Ռ. Զարբաբյանը,
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Մուրադյանը

1. «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/18» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 05.08.2020 թվականին ներկայացված հարցմանը պարզաբանում պատասխանելու վերաբերյալ

(Ի. Կուբատյան)

Պարզաբանման պահանջի տեքստ հ 1.

Հարգելի պատվիրատու,
1. խնդրում եմ պարզաբանել, արդյո՞ք մրցույթն իրականացվում է ՀՀ Գնումների մասին օրենքի 15-րդ հոդվածի 6–րդ կետի համաձայն (պայմանով):
2. Հրավերում ներառված Պայմանագրի նախագծի 3.3 կետում նշված է, որ վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:
Արդյո՞ք ապրանքի մատակարարումն իրականացվելու է նույն սկզբունքով՝ մինչև 2020թ"–ի դեկտեմբերի 30-ը:
Կանխավ շնորհակալություն,
Հարգանքով

Պարզաբանում տրամադրելու տեքստ.

Ի պատասխան Ձեր հարցմանը տեղեկացնում ենք հետևյալը.
Սույն գնման ընթացակարգը հայտարարվել է «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դրույթի կիրառմամբ, համաձայն որի՝ «Մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել...»:

Հրավերով նախատեսված պայմանագրի նախագծի 8.15 կետի համաձայն՝ «Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող *վեց ամսվա ընթացքում* այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

Պատվիրատուի կողմից հրավերով հստակ սահմանվել է ապրանքի մատակարարման ժամկետներ՝ Պայմանագիրը (**համաձայնագիրը**) ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 90 օր և մասնակիցները պետք է առաջնորդվեն նշված ժամկետներով, իսկ ինչ վերաբերում է պայմանագրի նախագծի 3.3 կետում նշված դրույթին, ապա այն սահմանում է ապրանքի հանձման-ընդունման և վճարման կարգը, իսկ դեկտեմբերի 30-ով սահմանփակվում է **տվյալ տարվա** համար նախատեսված պատվիրատուի վճարման պարտավորությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Ի. Կուբատյան
Անդամներ՝		Ս. Մանուկյան
		Ի. Նիկողոսյան
		Ա. Ղարիբյան
		Ռ. Զարբաբյան
Քարտուղար՝		Գ. Մուրադյան